ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, 093434566, 091454366, nshavan79@am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2013թվականի N 16

ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014թ-ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,10-րդ և 11-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով՝ Նշավան համայնքի ավագանին որոշում է

Նշավան համայնքում սահմանել 2014թ-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ոչ հիմական շինարարության տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել.
Հիմնական օբյեկտների համար
ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար սահմանել 15000 դրամ:
բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30000 դրամ
բբ) 501քմ-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ
բգ) 1001քմ-ի մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 60000 դրամ
բդ) 3001քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 100000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դրամ
դ) 20քմ և ավելի մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող

դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցներ(այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործաական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ
բ) բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքու շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ
Սույն հոդվածի 1-ին,2-րդ և 3-րդ կետերի համար կիրառել 0.5 գործակիցը՝սահմանված դրույքաչափի համար:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է
ա) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝2500 դրամ:
բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝2500 դրամ:

5.Համայնքի տարածքում
ա) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 1քմ համար 350 դրամ:
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և(կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:
գ) խանութներում կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 3000 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված

տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարական շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝500 դրամ:
2.Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 500 դրամ:
3.Մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝500 դրամ:
4.Աղբահանության վճար՝յուրաքանչյուր անձի համար ամեն ամիս 20 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՌՆԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, 093434566, 091454366, nshavan79@am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2013թվականի N 17

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի պահանջներով ավագանին որոշում է

Հաստատել Նշավան համայնքի ղեկավարի աշխատավարձի գյուղապետարանի աշխատակազմի բյուջետային և հիմնարկների աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2014թ-ի համար

ա) աշխատակիցների թվաքանակը 14
բ) աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1.Համայնքի ղեկավար 143000 դրամ
2.Համայնքի ղեկավարի տեղակալ 80000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ
1.Աշխատակազմի քարտուղար 1.2-1 - 104700 դրամ
2.Աշխատակազմի գլխավոր մասնագետ 2.3-1 - 102400 դրամ
3.Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-1 - 92500 դրամ
4.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ 3.2-1 - 62168 դրամ
5.Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ 3.3-1 - 61000 դրամ

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ
1.Օպերատոր - 80000 դրամ
2.Վարորդ - 59524 դրամ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ
1.Մշակույթի տան տնօրեն - 59524 դրամ
2.Համույթի ղեկավար - 59524 դրամ
3.Հավաքարար - 59524 դրամ

ԳՐԱԴԱՐԱՆ
1.Գրադարանավար - 92000 դրամ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
1.Գերեզմանոցի պահակ - 59524 դրամ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ
Աշխատակիցների թվաքանակը 15, հաստիքային միավորները 11
1.Տնօրեն 1 հաստիք -97000 դրամ
2.Հաշվապահ 0.5 հաստիք -59524 դրամ
3.Դաստիարակ 2.5 հաստիք -238250 դրամ
4.Երաժշտութ. դաստիարակ 0.5 հաստիք - 59524 դրամ
5.Երկու դայակ 1 հաստիք - 59524 դրամ
6.Խոհարար 1 հաստիք - 59524 դրամ
7.Բուժքույր 0.5 հաստիք - 59524 դրամ
8.Պահակ 1 հաստիք - 59524 դրամ
9.Տնտեսվար 0.5 հաստիք -59524 դրամ
10.Գործավար 0.5 հաստիք -59524 դրամ
11.Դռնապահ 1 հաստիք - 59524 դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՌՆԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, 093434566, 091454366, nshavan79@am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2013թվականի N 18

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱԿՏԸ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է

Հաստատել հանձնաժողովի կողմից ներկայացված ակտը գույքագրման արդյունքների մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՌՆԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
5. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ